Գրասենյակային տարածքների բույսերի և արտաքին կանաչապատ տարածքների խնամք

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն հրավիրում է մասնագիտացված ընկերություններին մասնակցելու բանկի նոր Գլխամասային գրասենյակի բույսերի և արտաքին կանաչապատ տարածքների խնամքի աշխատանքների իրականացման հրապարակային բաց մրցույթին: Գնառաջարկը պետք է ներառի ամսական սպասարկման ընդհանուր արժեքը հարկերը ներառյալ:

1. Բանկի գրասենյակային տարածք բույսերի խնամք
    - Բույսերի ջրում,
    - Բույսերի բուժում /բուժանյութերը ապահովում է կատարողը/,
    - Խնամքի ընթացքում վնասված բույսերի փոխարինում կատարողի կողմից,
2. Արտաքին կանաչապատ տարածքների խնամք
    - Ծառերի և թփերի էտում, սեզոնային սրսկում, ձևավորում և պարատացում /քիմիական մշակման համար օգտագործվող նյութերը ապահովում է կատարողը/,
    - Սիզամարգերի հունձ, պարարտացում և սեզոնային աէրացիա,
    - Մոլախոտերի մաքրում,
    - Ոռոգման համակարգի ավտոմատիկայի կարգավորում, ֆիլտրերի մաքրում, պոմպերի և էլեկտրական սարքավորումների կարգաբերում /լրացուցիչ վնասված դետալների և սարքավորումների փոխարինման ծախսերը իրականացվում են պատվիրատուի հաշվին/
3. Անհրաժեշտ պահանջներ
    - Աշխատանքների իրականացման ժամանակացույցը ներկայացվում է կատարողի կողմից և համաձայնեցվում պատվիրատուի հետ,
    - Կատարողը պարտավոր է համագործակցել բանկի տարածքի ընդհանուր սպասարկումը իրականացնող ընկերության պատասխանատուի հետ,
    - Սպասարկող աշխատակիցները պետք է ունենան համապատասխան համազգեստ (Uniform)
    - Հնարավոր է մրցույթի մասնակցություն արտաքին տարածքների կամ ներքին տարածքների խնամքի աշխատանքների իրականացման համար առանձին-առանձին:

Հաղթող ընկերության հետ կկնքվի ծառայությունների մատուցման պայմանագիր 1 տարի ժամկետով՝ երկարացման հնարավորությամբ, բայց ոչ ավել մինչև 3 տարի: